ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ Ի. ՋԱՎԱԽԻՇՎԻԼՈՒ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 30-ին Երևանում տեղի ունեցավ գիտական սեսիա՝ նվիրված ականավոր վրաց պատմաբան, վրացագետ և հայագետ Իվանե Ջավախիշվիլու ծննդյան 100-ամյա հոբելյանին։ Այն կազմակերպել էին Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության և արևելագիտության ինստիտուտները և Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը։

Գիտական սեսիան բացեց Մատենադարանի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Լ. Խաչիկյանը։ Սովետական Հայաստանի գիտական հասարակայնության ներկայացուցիչները,— ասաց նա,— հավաքվել են իրենց խորին հարգանքի տուրքը մատուցելու եղբայրական Վրաստանի գիտական մտքի հսկաներից մեկին, մեծարելու ակադեմիկոս Ջավախիշվիլու հիշատակը։ Այնուհետև Լ. Խաչիկյանը նշեց, մասնավորապես, այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերում էր Ջավախիշվիլին դրացի ժողովուրդների մշակույթի և պատմության նկատմամբ։ Վիթխարի է ակադեմիկոս Իվանե Ջավախիշվիլու գիտական ժառանգությունը։ Դժվար է գտնել հին և միջնադարյան Վրաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի որևէ բնագավառ, որի պատմության ուսումնասիրությունը անմիջականորեն չաղերսվի մեծ գիտնականի անվան հետ։

Մեծ են նաև Ջավախիշվիլու՝ հայագիտությանը մատուցած ծառայությունները։ Նա հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության, ինչպես նաև հայ մատենագրության հետազոտողներից է։ Սովետական Հայաստանի գիտնականները, նշելով ակադեմիկոս Ջավախիշվիլու հարյուրամյա հոբելյանը, իրավամբ նրան համարում են հայ ժողովրդի բարեկամ և հայագիտության երախտավոր։

«Իվանե Ջավախիշվիլու կյանքն ու գործը» թեմայով զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ Ս. Երեմյանը։ Նա նշեց, որ վրաց ժողովրդի գիտության պատմության մեջ դժվար է հիշատակել մի այլ անուն, որն այնքան խոր հետք թողած լինի վրացագիտության մեջ, որպիսին թողել է Ջավախիշվիլին։ Զեկուցողը իրավացիորեն ընդգծեց հատկապես այն հանգամանքը, որ ակադեմիկոս Ջավախիշվիլու գիտական գործունեությունը սերտորեն կապված է ոչ միայն վրացագիտության, այլև հայագիտության հետ։ Ուստի և հայ ժողովուրդը, նշելով մեծ գիտնականի հոբելյանը, պատշաճն է հատուցում վրաց մեծ գիտնականի հիշատակին։ Զեկուցողը այնուհետև նշեց, որ առանց հայագետ և վրացագետ լինելու անհնարին է հետազոտել միջնադարյան Վրաստանի և Հայաստանի պատմությունը։ Այս իրողությունը քաջ գիտակցել էին Մ. Բրոսսեն, Ն. Մառը և նրանց աշակերտներ Ի. Ջավախիշվիլին, Ն. Ադոնցը և Հ. Օրբելին։ Այնուհետև, ուրվագծելով ականավոր գիտնականի անցած կյանքի ուղին, Ս. Երեմյանը նշեց, մասնավորապես, քաղաքացիական պարտքի այն մեծ զգացումը, որ ցուցաբերում էր Ջավախիշվիլին վրաց ժողովրդի պատմության կամ մշակույթի խնդիրներն ուսումնասիրելիս։ Զեկուցողը հանգամանորեն արժեքավորեց Ջավախիշվիլու գիտական ժառանգության նշանակությունը վրացագիտության և հայագիտության համար, մասնավորապես ծանրացավ միջնադարյան Հայաստանի սոցիալական շարժումների պատմությունը հետազոտելու բնագավառում ականավոր գիտնականի ունեցած երախտիքի վրա։ Ակադեմիկոս Ս. Երեմյանը բարձր գնահատեց նաև Ջավախիշվիլու գիտա-մանկավարժական գործունեությունը՝ գիտական կադրեր աճեցնելու, ինչպես և 1918 թ. գիտնականի նախաձեռնությամբ Թբիլիսիի համալսարանը (առ այսօր գործող հայագիտական ամբիոնով հանդերձ) ստեղծելու կապակցությամբ։

Բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Մուրադյանը իր զեկուցման մեջ անդրադարձավ մեծ գիտնականի աշխատություններում շոշափված հայագիտական հարցերին։ Իրավաբանական գիտությունների թեկնածու Խ. Թորոսյանը հանդես եկավ «Իվանե Ջավախիշվիլին հայ իրավունքի և սոցիալական շարժումների պատմության հետազոտող» ուշագրավ զեկուցումով։ ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ա. Մարգարյանը իր զեկուցումով ականավոր գիտնականին ներկայացրեց որպես աղբյուրագետ։

Գիտական սեսիայի աշխատանքներին մաս-

նակցեց Վրաստանի ԳԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Կ. Դումբաձեն, որը, շնորհակալություն հայտնելով գիտական սեսիա գումարելու համար, նշեց, որ Վրաստանի գիտական հասարակայնությունը սույն իրողությունը գնահատում է ոչ միայն որպես Իվանե Ջավախիշվիլու, այլև ողջ վրաց ժողովրդի հանդեպ ցուցաբերած սիրո և հարգանքի դրսևորում։

Գիտական սեսիայի աշխատանքները ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Ս. Աղայանը, որը իր եզրափակիչ խոսքում շեշտեց, մասնավորապես, Ջավախիշվիլու մեծ ավանդը հայ և վրաց ժողովուրդների բարեկամության պատմությունը ուսումնասիրելու բնագավառում։

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ դեկտեմբերի 9—10-ին կայացավ հանրապետական առաջին իրանագիտական կոնֆերանսը, որին իրենց մասնակցությունը բերեցին Պետհամալսարանի, Մատենադարանի, պատմության ինստիտուտի, հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի պատմության պետական թանգարանի, արվեստի ինստիտուտի աշխատակիցները։

Կոնֆերանսի շրջա նիստերում ներկայացված 22 զեկուցումների գերակշիռ մասը նվիրված էր Իրանի պատմության հարցերին՝ սկսած վաղ ժամանակներից մինչև մեր օրերը։ Առանձնակի հետաքրքրություն առաջացրեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանի «Վաղարշ II-ը և նրա քաղաքական հարաբերությունները պարթևների և Հռոմի հետ», ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Սարգսյանի «Աքեմենյան արամեերեն գրասենյակի ավանդույթները հին Հայաստանում», Խ. Մուշեղյանի «Մասանյան դրամների տարածումը հին Հայաստանում V—VII դդ.», Գ. Տիրացյանի «Հայաստանի աբեմենյան շրջանի գեղարվեստական մետաղագործությունը» զեկուցումները։

Իրանի պատմության համեմատաբար սակավ լուսաբանված և կամ դեռևս ամենևին չուսումնասիրված հարցերի քննարկմանն էին նվիրված նաև Հ. Եգանյանի «Իրանական լուսավորիչ Մալքոմ խանի (Մելքոնյան) դերը Իրանի հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում», Վ. Բայբուրդյանի «Թուրք-իրանական հարաբերությունները և քրդական պրոբլեմը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին», Բ. Բալայանի «Ժամանակակից Իրանի հարավային շրջանի իլ-աշիրե կոչվող ֆեոդալական ինստիտուտների անկումը», Խ. Զատոևի «Քրդերի մասնակցությունը Իրանի ազգային-ազատագրական շարժումներին (1917—1921 թթ.)», Պ. Մուրադյանի «Աբու Սաիդի Անիի պարսկերեն հրովարտակ-արձանագրության թվականը», Գ. Հարությունյանի «Հայ պարբերական մամուլը որպես աղբյուր 1905—1911 թթ. իրանական հեղափոխության պատմության», Հ. Փահլևանյանի «Բահաիզմը և նրա ռեակցիոն էությունը», Լ. Դանեղյանի «Մանր ժամանակագրությունները որպես Իրանի պատմության աղբյուր» և Ա. Ստամբոլցյանի «Ազգային բուրժուազիայի կառավարությունը և Իրանի ժողովրդական կուսակցությունը» զեկուցումները։

Իրանական բանասիրության և արվեստի մի շարք կարևոր ու ակտուալ հարցերին էին նվիրված Լ. Շեխոյանի «Ժամանակակից պարսկական վիպակի ժանրը», Հ. Մովսիսյանի «Աղթամար» լեգենդի պարսկական տարբերակը» և Ա. Կոզմոյանի «Խայամյան բառյակները որպես ռուբաիի զարգացման պատմության նոր աստիճան» զեկուցումները։

Լեզվաբանական հաղորդումներով հանդես եկան Գ. Նալբանդյանը՝ «Ժամանակակից գրական պարսկերեն լեզվի ձայնավորների շուրջը», Օ. Արզումանյանը՝ «Պարսկական անթրոպոնոմիկայի մի քանի հարցեր», Մ. Խամոյանը՝ «Տարբեր մակարդակների միավորների մասնատման հարցի շուրջը», Գ. Մելիքյանը՝ «Ժամանակակից պարսկերեն հարադիր բառակապակցությունների լեքսիկա-բերականական բնութագրման շուրջը»։

Հետաքրքրությամբ լսվեցին նաև Մ. Ղազարյանի («Պարսկական հաստոցային նկարչության սկզբնավորումը») և Ռ. Ամիրբեկյանի («Մատենադարանի արաբա-պարսկական ֆոնդի № 1036 ձեռագրի գեղարվեստական ձևավորումը») զեկուցումները՝ նվիրված պարսկական նկարչությանը։

Իրանագիտական կոնֆերանսի աշխատանքները ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Սարգսյանը։

Ա. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ